Ահա այս Շահ Սուլեյմանն է, որ բռնեց Սաֆի խանին և պատվեց Հակոբ կաթողիկոսին: Սրա մոտ եկավ Թամրազի թոռ Հերակլը, որը կպատմենք հետո: Այս Շահ Սուլեյմանը ուներ մի որդի, շատ քաջ էր, ուժեղ և հմուտ էր նետաձգությամբ: Հայրը նրան պահպանում էր թագավորության համար: Ուր որ գնում էր, տանում էր նաև որդուն, որը թուրը, նետերի կապարճը, աղեղը կապում էր վրան:

Մի օր շահը մտնելով պարտեզ, իսկ որդին իր առջև հանեց նետը, դրեց աղեղին և խփեց ծառին. նետը անցավ, թափանցեց այն կողմը ճանդարի ծառից: Հայրը այս տեսնելով՝ քենով լցվեց որդու հանդեպ և կամեցավ որդուն կորցնել, բայց ոչ բացարձակ: Այն գաղտնի ասաց ներքինապետին. «Երբ նա գա հարճի մոտ, քնելիս զարկեք և սպանեք նրան ու գաղտնի կորցրեք»: Այս բանը հայտնեցին մորը, մայրը գնաց, աղաչում էր իր կեսուրին, որ շահի մայրն էր, և ասաց. «Քո որդին կամենում է սպանել իմ որդուն: Քեզ աղաչում եմ ի սեր Աստծու և իր արևշատության համար, մի տաք իմ սրտին կսկիծ նրա մահով, այլ տարեք, հեռացրեք, թող իր մահով մեռնի»: Մայրը գնաց, աղերսում էր որդուն, որ արյուն չհեղի և սուգ չլինի մեզ համար: Շահը ասաց՝ կանեմ ըստ քո ցանկության: Եվ ասաց որդուն՝ գնա Ֆահրապատ, այնտեղ մնա, մինչև կանչեմ քեզ: Իսկ տանողներին պատվիրեց, թե երբ տեղ հասնեք, սպանեք նրան, գլուխը բերեք ինձ: Առան գնացին: Շահը մի օր մտավ կանանց մեջ, նրան հանդիպեց իր մայրը, համամայր քույրը և մեկը իր հոր կանանցից: Չիմացավ թե դա իր քույրն է, թաշկինակը գցեց նրա վրա, որպես թե շահի հետ գնա մեղսագործության: Մայրացուն ասում է, թե դա քո քույրն է: Եվ այդ բանի վրա բարկանալով՝ հանեց թուրը և սպանեց քրոջն ու մայրացուին, ելավ գնաց: Եվ միաժամանակ բերին որդու սպանման լուրը: Զղջաց երեքի մահը, կսկծից դիվահարվեցավ, խելագարվեց, խոսում էր անիմաստ, բացում էր առնանդամը և քսում էր պատերին, գետնին ընկած թավալվում էր: Ներքինապետը հայտնեց եպարքոսին, ծածուկ կերպով կորցրին նրան, որ թագավորեց քսանհինգ տարի: Նրա փոխարեն թագավոր դրին մյուս որդուն՝ Հուսեինին հազար հարյուր քառասուներեք (1694) թվին:

ԳԼՈՒԽ ԽԴ
ՕՆՈՓՐԻՈՍԻ ԿՈՐՈՒՍՏԸ

Ինչպես գրեցինք, թե Եղիազարը եղավ կաթողիկոս, և Օնոփրիոսը մնաց նրա մոտ և միաբանվեց նրա հետ ամբողջ սրտով: Եվ քարոզում էր ճարտարորեն, Եղիազարին անվանեց երկրորդ Լուսավորիչ: Ճարտարախոսության, ճոխաբանության, արագ-արագ խոսելու պատճառով Օնոփրիոսին անվանեցին Կարկուտ, բայց Եղիազարին համախոհ էր: Երբ մեծ կաթողիկոս Հակոբը գնաց Կոստանդնուպոլիս, շատերը եկան նրա մոտ. և երբ Կարկուտը իմացավ, թե չի կարող դիմամարտել արեգակի հետ, կռվեց իր համախոհ Եղիազարի հետ և կեղծավորելով ասաց, որ ինքը որպես թե զղջացել է, եկավ Հակոբ կաթողիկոսի մոտ, ընկավ նրա ոտքերը և ասաց՝ ահա ճանաչեցի իմ անօրենությունները և քո բարերարությունը, մի հիշիր իմ չարիքները: Իսկ մեծ հայրապետը հավատաց նրա սուտ ու կեղծ խոսքերին, նրան թուղթ տվեց, առաքեց Սուրբ Աթոռ Էջմիածին լինելու այնտեղ աթոռակալ:

Եկավ նստեց փքված: Արդ՝ անհնար է, որ կրակը թողնի իր այրեցողությունը, հողմը՝ իր սառնությունը և ամբարիշտ մարդը իր չարությունը: Քանզի երբ սա եկավ Սուրբ Աթոռ Էջմիածին, սկսեց նոր չարիքներ գործել: Սուտ մուրհակ հանեց՝ այսինքն թամասուկ, Զաքարիա վարդապետի վերաբերությամբ, թե իբր երեք հարյուր թուման պարտք է իրեն: Մի այլ չար մուրհակ ևս, թե ես՝ Զաքարիա վարդապետս, ունեմ հազար թուման Օհանավանքում՝ թե դրամ, թե այլ ինչ, այդ ամենը տվի իմ հոգևոր որդու միջոցով Օնոփրիոս վարդապետին, ինչ որ նա ցանկանա, այնպես թող անի: Եթե որևէ մեկը հակառակվի նրան, նրա ամեն ինչը հարքունիս լինի: Այս երկու մուրհակները ցույց տալով՝ խստորեն պահանջում էր երեք հարյուր թուման: Իսկ Հովհաննես վարդապետը Զաքարիայի փոխարեն նստել էր Օհանավանքում և իբրև առաջնորդ՝ տարակուսած, անճարացած, չգիտեր, թե ինչ պետք է անի, որովհետև հրապարակավ խոսելու շնորհք չուներ, այս պատճառով տիրոջից ողորմություն հասավ նրան: Քանզի Սպահանից մի ջուղայեցի Աղամալ անունով մարդ եկավ, որ Զաքարիա վարդապետին բարեկամ էր և խիստ սիրող էր Օհանավանքը: